«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	**«Արտահայտիչ կարդալու հմտությունների զարգացումը տարրական դասարաններում»**
ԱՌԱՐԿԱ	**Դասվար**
ՀԵՂԻՆԱԿ	**Աննա Հովսեփյան**
ՄԱՐԶ	**Երևան**
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	**Սիամանթոյի անվան հ. 162 հիմն. դպրոց**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ 1. ԱՐՏԱՀԱՅՏԻՉ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՈՒՂԻՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 5

1.1 Կարդալու կարողության ձևավորումը ըստ հեղինակների 5

1.2 Ընթերցանության հմտությունների ձեռքբերումը տարրական դասարաններում .. 9

ԳԼՈՒԽ 2. ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԱՐՏԱՀԱՅՏԻՉ ԿԱՐԴԱԼՈՒ ՏԵԽՆԻԿԱՅԻ և ՈՐԱԿԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ ՁԵԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ 11

2.1 Գործնական աշխատանքների կազմակերպումը արտահայտիչ կարդալու դասաժամերին 11

2.2 Արտահայտիչ կարդալու հմտությունների զարգացման ընթացք..... 15

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ..... 19

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության կարևորությունը: Ընթերցանությունը տարրական դասարաններում մայրենի լեզվի ուսուցման ու աշխարհաճանաչողական տարրական տեղեկությունների հաղորդման, երեխաների մտավոր զարգացման ու բարոյական դաստիարակության ամենակարևոր միջոցներից մեկն է: Այն մեր դպրոցներում այժմ տարվում է բացատրական ընթերցանության մեթոդով, որը ուսուցման ձևերի ու եղանակների մի ամբողջ համակարգ է կազմում: Բացատրական ընթերցանությունը, որպես տարրական դասարաններում գործնական կերպով մայրենի լեզվի ու աշխարհաճանաչողական տարրական գիտելիքների ուսուցման նոր, ինքնուրույն ու առաջադիմական մեթոդ, հանդես եկավ ի հակադրություն մայրենի լեզվի ուսուցման սխոլաստիկ - սերտողական մեթոդների: Հնում երեխաներին կարդալ ու գրել սովորեցնում էին հիմնականում կրոնական բովանդակություն ունեցող եկեղեցական գրքերի վրա, որոնք թե՛ իրենց բովանդակությամբ և թե՛ լեզվական ձևով խորթ ու անհասկանալի էին նրանց: Երեխաների հետաքրքրություններին ու ըմբռնումներին համապատասխանող ընթերցարաններ ստեղծելու պահանջն ամենից առաջ ծագել է Գերմանիայում՝ 18-րդ դարի սկզբերին, սակայն այդ տիպի առաջին դասագիրքը ստեղծվեց 1776 թվականին միայն՝ Է. Ռոխովի կողմից: Նրա «Մանուկների բարեկամ» ընթերցարանը, որում զետեղված էին 79 ինքնուրույն նյութեր՝ աշխարհիկ բովանդակություն ունեցող հոդվածներ, պատմվածքներ, խրատներ, երգեր, աղոթքներ ու առածներ, կարճ ժամանակում լայն տարածում գտավ և բազմաթիվ հրատարակություններ և հետևորդներ ունեցավ եվրոպական շատ երկրներում: 18-րդ դարի վերջերին կազմվեցին նաև բարոյակրթական ու ռեալիստական ուղղության մի շարք նոր ընթերցարաններ: Հետագայում դրանց փոխարինելու եկան գերմանական նշանավոր մանկավարժ Դիստերվեգի լեզվագիտական ընթերցարանները, որոնց նպատակը հիմնականում լեզվի ուսուցումն է, ուստի դրանցում բոլոր նյութերը ընտրված և դասավորված էին ըստ քերականական հասկացությունների հաջորդականության: 19-րդ դարի սկզբերին հերբարտյան մանկավարժական դպրոցի հետևորդները ստեղծեցին նոր տիպի գեղագիտական ընթերցարաններ, որոնց բովանդակությունը կազմում էր մի կողմից լեզվի ու աշխարհաճանաչողական տարրական գիտելիքների ուսուցումը, իսկ մյուս կողմից՝

երեխաների բարոյական ու գեղագիտական դաստիարակությունը: Փոխարինելու գալով մեխանիկական ընթերցանությանը և սերտողությանը, որոնք հատուկ էին հին դպրոցին՝ բացատրական ընթերցանությունը իր ժամանակի համար միանգամայն առաջադիմական երևույթ էր:

Հետազոտության նպատակը:

Հետազոտության ուսումնասիրման հիմնական նպատակն է հանդիսացել բացահայտել արտահայտիչ կարդալու հմտությունների զարգացումը տարրական դասարաններում: Մեր նպատակն է զարգացնել կրտսեր դպրոցականների կարդալու, վերարտադրելու կարողությունները, ճանաչողական և լեզվական գիտելիքները, կատարելագործել նրանց հարուստ խոսքի ու բառապաշարի կիրառական հմտությունները, ձևավորել արժեքների համակարգ:

Հետազոտության խնդիրները:

1. Ուսումնասիրել և ներկայացնել արտահայտիչ ընթերցողներ պատրաստելու ուղիներն ու առանձնահատկությունները:
2. Ուսումնասիրել կարդալու կարողությունների զարգացմանը նպաստող աշխատանքները տարրական դասարաններում:
3. Ցույց տալ կրտսեր դպրոցականների կարդալու տեխնիկայի և որակական հատկանիշների ձևավորման ընթացքը:

ԳԼՈՒԽ 1. ԱՐՏԱՀԱՅՏԻՉ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՈՒՂԻՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.1 Կարդալու կարողության ձևավորումը ըստ հեղինակների

Կրտսեր դպրոցում մայրենիի դասընթացի կարևոր բաղադրիչներից է ընթերցանությունը, որի նպատակն է զարգացնել կրտսեր դպրոցականների կարդալու, վերարտադրելու կարողությունները, հարստացնել նրանց խոսքն ու բառապաշարը, ճանաչողական և լեզվական գիտելիքները, ձևավորել արժեքների համակարգ: Սովորողների կարդալու տեխնիկայի զարգացմանը զուգընթաց՝ անհրաժեշտ է նաև արտահայտիչ խոսքի և կարդալու կարողություններ մշակել դեռևս գրաճանաչության այբբենական շրջանում: Այդ աշխատանքը պետք է սկսել՝ աշակերտներին ծանոթացնելով խոսքի տեխնիկայի բաղադրիչներին՝ շնչառություն, ձայն, հնչերանգ, առոգանություն: Հատուկ շնչառական վարժությունների միջոցով աշակերտներին առաջին հերթին պետք է սովորեցնել ճիշտ շնչել: Կարելի է կատարել առոգանությունը զարգացնող վարժանքներ: Մեթոդիկայում մշակված են աշակերտների հնչյունային լսողությունը և առոգանությունը զարգացնող շատ վարժություններ[1]: Այսպես՝

ա. կարդալ մտքում,

բ. արտասանել շշուկով, դանդաղ, ցածրաձայն, կամաց, բարձրաձայն և արագ:

Նախադասության մասին տարրական գիտելիքների ուսումնասիրման ժամանակ անհրաժեշտ է երեխաների ուշադրությունը հրավիրել հարցական, բացականչական, հրամայական, պատմողական նախադասությունների ելևէջավորման վրա և սովորեցնել գործնականորեն տարբերել դրանց ընթերցման առանձնահատկությունները: Հայտնի է արտահայտիչ ընթերցանության երկու եղանակ՝ բեմական և դասարանական: Անառարկելի է, որ արտահայտիչ կարդալու նախապայմանը բնագիրը լավ հասկանալն է: Կան նաև մի շարք արտաքին նշաններ, որոնք երեխաները պետք է ճանաչեն ու ըմբռնեն: Դրանք հայերենի կետադրական ու առոգանական նշաններն են: Աշակերտներն աստիճանաբար պետք է գիտելիքներ ձեռք բերեն արտասանական երանգավորման կամ հնչերանգի ու նրա բաղադրիչների մասին: Նրանց գիտակցությանը պետք է հասցվի, որ խոսքն ազդեցիկ ու լսելի դարձնելու համար կարևոր են ձայնի ու նրա ելևէջների փոփոխությունը՝ բարձրացումն ու ցածրացումը, կարդալու տեմպը, ռիթմը,

[1] Ա.Տեր-Գրիգորյան, Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան 1980:

դադարները, շեշտը, և սովորեցնի այդ ամենը կիրառել կարդալու ընթացքում: Կետադրական նշանների մասին նախագիտելիքներ տրվում են դեռևս գրաճանաչության նախապատրաստական շրջանում:

Եթե սովորողի մոտ ձևավորված է կարդալու կարողությունը, ապա ընթերցած բնագրի շուրջ տարվող մեթոդապես ճիշտ աշխատանքի շնորհիվ ընթերցանությունը դառնում է նաև անձի բազմակողմանի զարգացման միջոց: Անառարկելի է, որ ընթերցանությունը գիտելիքների ձեռք բերման, բազմակողմանի զարգացման, բառապաշարի հարստացման հիմնական աղբյուր է: Կարդալու միջոցով հարստանում ու զարգանում են աշակերտների երևակայությունը, հոգեկան ներաշխարհը, խոսքը, ճաշակը: Հենց այս է պատճառը, որ մանկավարժներն ու մեթոդիստներն ամեն ինչ անում են սերունդների մեջ ընթերցողական կարողությունների մշակման, ընթերցասիրության դաստիարակության համար: Այս կարևոր խնդրի լուծման ճանապարհին հիմնականը կարդալու հմտությունների զարգացումն է: Որպեսզի երեխան սիրի գիրքը և կարդա, պետք է ուսուցիչը լավ կարդալ սովորեցնի աշակերտներին ու օգնի նրանց հաղթահարելու կարդալու ընթացքում առաջացած դժվարությունները:

Ա. Ղարիբյանը ժամանակին ասել է. «Բացատրական ընթերցանության հիմնական նպատակներից է կարդալ սովորեցնելը, որովհետև կարդալու ուսուցումը լեզվի ուսուցման ամենահիմնական ու պատասխանատու բաժինն է: Թե՛ լեզվի մյուս բաժինների և թե՛ միջնակարգի բոլոր այլ առարկաների յուրացումն ապահովում է աշակերտի կարդալու հմտությամբ: Անհնարին է ծանոթանալ որևէ գիտության հիմունքներին, առավել ևս դառնալ ժամանակակից կուլտուրայի պահանջների բարձրության վրա կանգնած մարդ, եթե կարդալ չգիտես: Կարդալու ուսուցման որակից է կախված մյուս առարկաների ուսուցման հաջողությունը, իսկ կարդալու հմտության հիմնական որակը որոշվում է կարդալու ուսուցմամբ տարրական դասարաններում»: Կրտսեր դպրոցականի ընթերցողական կարողությունների զարգացումը նպաստում է ուսուցման արդյունավետության բարձրացմանը:

Ճիշտ, սահուն, հասկանալով, արտահայտիչ կարդացող աշակերտներն ավելի լավ են սովորում ցանկացած առարկա, քան կցկտուր 9 կարդացողները: Բանն այն է, որ վատ կարդացողն ընթերցելիս իր ուշադրությունը հիմնականում կենտրոնացնում է կարդալու գործողությանը և չի ըմբռնում կարդացածի բովանդակությունը, հիմնական միտքը և այլն: Լավ կարդացողն արագ է ըմբռնում, հասկանում

բնագիրը, որովհետև նա ժամանակ չի ծախսում կարդալու գործողության վրա: Ընթերցանության նկատմամբ հետաքրքրասիրություն աշակերտների մեջ պետք է առաջացնել դեռևս առաջին դասարանից: Այդ իսկ պատճառով այբբենարանն ավարտելուց հետո անգամ պետք է փոքրերի համար կարդալ հետաքրքիր հեքիաթներ և իրենց նույնպես դրդել դրանք կարդալ, հետաքրքրություն առաջացնել կարդալու նկատմամբ:

Գրաճանաչության ուսուցման շրջանում ձևավորվում է կարդալու նախնական կարողությունը: Աշակերտն առաջին հերթին պետք է հոգեբանորեն պատրաստ լինի և իր մեջ ձևավորի այն համոզմունքը, որ ինքը նոր նյութը՝ հեշտ թե դժվար, կարող է կարդալ: Ըստ Ջ. Գյուլամիրյանի՝ «Աշակերտը կարդալ սովորում է ոչ թե նույն նյութը բազմակի ընթերցելով, այլ անծանոթ նյութերի անընդհատ ընթերցմամբ»: Այժմ մշակվել են ոչ ավանդական ժամանակակից բազմաթիվ մեթոդներ և հնարներ, որոնց միջոցով աշակերտներն ավելի հաճախ են ընթերցում ինքնուրույն կամ խմբովի: Սրանք նպաստում են կարդալու գործընթացի արդյունավետությանը[2]: Այդ մեթոդների անտեղի օգտագործումը կխոչընդոտի ուսուցման գործընթացի հաջող իրականացմանը: Իսկ որոշ մեթոդների կիրառումը դժվար կլինի, եթե աշակերտները լավ չտիրապետեն լավ կարդալու տեխնիկային, օրինակ՝«Խճանկար» մեթոդը: Նախ աշակերտն առաջին խմբում պարտավոր է սովորել նոր նյութը, ապա սովորեցնել մյուս խմբի ընկերներին: Եթե նա ընթերցողական հմտություններ չունի, ապա չի կարողանա կատարել տվյալ հանձնարարությունը: Մանկավարժական պրակտիկայում կիրառվում են կարդալու կարողությունը զարգացնող մեթոդներ: Արդյունավետ է «Փոխգործուն գրառումների համակարգ», «Քառաբաժան», «Կրկնակի գրառումներով օրագիր», «Մտածի՛ր-զուգորդի՛ր-մտքե՛ր փոխանակիր» և այլն:

Կարդալու որակական հատկանիշներն են՝

- Ճիշտ կամ անսխալկարդալ
- Վարժ կամ սահուն կարդալ
- Հասկանալով կամ գիտակցելով կարդալ
- Արտահայտիչ կամ գեղարվեստորեն կարդալ

---

[2] Ջ.Գյուլամիրյան, Կարդալու կարողությունների և խոսքի զարգացումը տարրական դասարաններում, Երևան, 1998:

- Արագ կարդալ առաջարկված բնագիրը ճիշտ կամ անսխալ կարդալ ասելով՝ հասկանում ենք բնագրի բարձրաձայն, պարզ ու հստակ ընթերցումը, երբ աշակերտն ընթերցելիս բաց չի թողնում ոչ մի տառ, վանկ, երբ բառի մեջ չի փոխում առանձին տառերի ու վանկերի տեղերը, դրանք չի շփոթում ուրիշ վանկերի և տառերի հետ, երբ փոփոխության չի ենթարկում բառի քերականական ձևը (այսինքն՝ գոյականի հոլովը, թիվը, բայի դեմքն ու թիվը, ժամանակը), երբ բառը չի շփոթում այլ բառի հետ, երբ նախադասության մեջ բաց չի թողնում առանձին բառեր կամ ավելացնում նորերը, երբ բառերն ավելորդ անգամ չի կրկնում, երբ բառերն արտասանում է գրական հայերենի արտասանության չափանիշներին համապատասխան[3]:
- Սահուն կամ վարժ կարդալ ասելով՝ հասկանում ենք առաջադրված նյութի՝ ամբողջական բառերով, առանց ընդհատելու, հնարավոր չափով արագ ու սահուն ընթերցումը, ընդ որում, կարդալու արագությունը պետք է համապատասխանի սովորական խոսակցության արագությանը՝ նպաստելով ընթերցած նյութի բովանդակության, գաղափարի ըմբռնմանը, ենթատեքստի կռահմանը (ինչպես կարդացողի, այնպես էլ ունկնդիրների կողմից):
- Հասկանալով կամ գիտակցելով կարդալ նշանակում է կարդացածը հասկանալ , ճշտությամբ վերարտադրել, պահպանել մտքի հաջորդականությունը և տրամաբանական կապը, վերլուծել կարդացածը: Վերլուծելը, թերևս, այն կարևոր և բարդ կարողություններից մեկն է, որը փորձում են ձևավորել տարրական դպրոցում: Հասկանալով կարդալու կարողության մշակումը ընթերցանության գերխնդիրն է:
- Կարդալը արտահայտիչ կամ գեղարվեստորեն է համարվում այն ժամանակ, երբ կարդացողը կարողանում է մտովի զգալ և իր ձայնի ելևէջներով, դադարներով վերակենդանացնել այն ապրումներն ու հույզերը, որ հեղինակը դրել է իր տողերի մեջ: Արտահայտիչ կարդալ սովորեցնելու հիմքում պետք է ընկած լինի հայերենի հիմնական կետադրական նշանների ըմբռնումը և կարդալու գիտակցականությունը:

[3] Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա,Եր., «Զանգակ»,2006

- Արագ կարդալու որակական այս հատկանիշը՝ որպես ժամանակի հետ կապված կենսական պահանջ, նոր է ձևավորել: Արագ կարդալու միջոցով կարճ ժամանակամիջոցում շատ տեղեկություն կարելի է ստանալ [4]:

1.2 Ընթերցանության հմտությունների ձեռքբերումը տարրական դասարաններում

Հոգեբանների կարծիքով, հասկանալով կարդալու համար, ընթերցողը առաջին հերթին պետք է կարդա արագ: Խոսքը լավ կարդալու մասին է, այսինքն՝ կարդալ խոսելու տեմպին համահունչ: Այդ հանգամանքը նրանք մեկնաբանում են որոշ տեսանկյուններից:

Ուսուցման տեսանկյունից: Եթե աշակերտը կարողանում է արագ կարդալ, իսկ միջին օղակում տնային հանձնարարությունները 5-8 էջ են կամ 6500 բառ, ապա 6500: 60 = 107րոպե: Մոտ 2ժամ անհրաժեշտ է որպեսզի նյութը կարդա գոնե 1 անգամ: իսկ չէ՞ որ պետք է այն կարդալ 2-3 անգամ և պետք է կատարի այլ տնային հանձնարարություններ:

Զարգացման տեսանկյունից: Արագ կարդում են այն մարդիկ, որոնք շատ են կարդում: Գործընթացում զարգանում է գործնական հիշողությունը և ուշադրության կայունությունը: Այս երկու ցուցիչներից է կախված նաև ընթերցողի մտավոր աշխատունակությունը[5]:

Դաստիարակության տեսանկյունից: Անառարկելի է, որ ընթերցողների դաստիարակությունը պայմանավորված է նրանց պարտավորություններից և զգայունակությունից: Եթե երեխան նախորդ դասարաններում լավ չի սովորել, հաջորդ դասարաններում ցածր է լինում նրա առաջադիմությունը: Աշակերտների համոզմամբ՝ սովորեն, չսովորեն՝ միջակություն կլինի: Ուրեմն՝ գերադասելի է չսովորելը[6]:

Տնտեսական տեսանկյունից : Առաջին հայացքից թվում է, թե այն շատ հեռու է կրթական համակարգից: ԱՄՆ-ի շատ ձեռնարկություններում կառավարական

---

[4] ԹորոսյանԿ., Չիբուխչյան Կ., Ընթերցանության դասաժամերի դերը ինքնուրույն գործունեության կազմակերպման և մտածողության զարգացման գործում // «Նախաշավիղ», Երևան, 2010, N6

[5] Ջ.Գյուլամիրյան, Կարդալու կարողությունների և խոսքի զարգացումը տարրական դասարաններում, Երևան, 1998:

[6] Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա,Եր., «Զանգակ»,2006

աշխատանքի չեն ընդունում այն անձանց, ովքեր 1րոպեում չեն կարդում 400 բառ: Համարվում է, որ նա «կխորտակվի թղթերի մեջ »:

Գաղափարա-քաղաքական տեսանկյունից: Եթե 6 թերթից բաղկացած թերթում կա մոտ 40000 բառ և կարդացողն էլ կարդում է 80 բառ, այն կարդալու համար անհրաժեշտ է 500 րոպե, մոտ 8 ժամ: Թվում է՝ անգրագիտություն չկա, սակայն կիսագրագիտությունն էլ ոչ մի բանով լավ չէ:

ԳԼՈՒԽ 2 ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԱՐՏԱՀԱՅՏԻՉ ԿԱՐԴԱԼՈՒ ՏԵԽՆԻԿԱՅԻ և ՈՐԱԿԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ ՁԵԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

2.1Գործնական աշխատանքների կազմակերպումը արտահայտիչ կարդալու դասաժամերին

Որպեսզի երեխաները լավ ըմբռնեն և տարբերեն նախադասությունների հնչերանգը, ուսուցիչը կարող է դիմել հետևյալ հնարին: Այսպես՝ կազմակերպել դերային խաղ, որի ընթացքում երեխաներն առավել բնական ու անկաշկանդ են[7]:

Օրինակ՝ «Գայլն ու սագերը» խաղի ժամանակ աշակերտներից մեկը հարցնում է.

-Ո՞վ կլինի գայլը:

-Ե՛ս,- պատասխանում է տղաներից մեկը:

-Իսկ ովքե՞ր են ուզում սագեր լինել:

-Մե՛նք, մե՛նք,- բղավում են բոլորը միաձայն:

Ուսուցիչն օգտագործելով խաղի ընթացքում հնչած երկխոսությունները՝ կարող է բացատրել հնչերանգը՝ պահանջելով, կրկնել հրաման, բացականչություն, հարցում արտահայտող նախադասությունները: Այնուհետև երեխաների ուշադրությունը հրավիրում է դրանցից յուրաքանչյուրի արտասանությանը.

-Լսե՛ք, թե ինչպես է Անին հարցնում, և դուք էլ կրկնե՛ք նրա հարցը, հետո պատասխանեք այդ հարցին:

Սրան հաջորդում է ուսուցչի հաջորդ հրահանգը.

-Հարցրե՛ք Անիին, թե որն է նրա սիրելի խաղը կամ ինչ խաղ է սիրում խաղալ:

Աշակերտների արտահայտիչ ընթերցելու կարողության ձևավորմանը աստիճանաբար զարգացնել մինչև երրորդ դասարանի վերջը: Մեր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ գրաճանաչության այբբենական և հետայբբենական շրջաններում կրտսեր դպրեցականները ընթերցանության ժամանակ դժվարանում են, չեն կարողանում տարբերակել առոգանության նշանների հնչերանգը [8] : Որպեսզի երեխաները լավ ըմբռնեն և տարբերեն նախադասությունների հնչերանգը, ուսուցիչը կարող է դիմել հետևյալ հնարին:

[7] Ա. Տեր Գրիգորյան, Խոսքի զարգացման մեթոդիկա, Երևան, 1976:

[8] Ա.Տեր-Գրիգորյան, Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան 1980:

Այսպես՝ կազմակերպել դերային խաղ, որի ընթացքում երեխաներն առավել բնական ու անկաշկանդ են[9]:

Օրինակ՝ «Գայլն ու սագերը» խաղի ժամանակ աշակերտներից մեկը հարցնում է.

-Ո՞վ կլինի գայլը:

-Ե՛ս,- պատասխանում է տղաներից մեկը:

-Իսկ ովքե՞ր են ուզում սագեր լինել:

-Մե՛նք, մե՛նք,- բղավում են բոլորը միաձայն:

Ուսուցիչն օգտագործելով խաղի ընթացքում հնչած երկխոսությունները՝ կարող է բացատրել հնչերանգը՝ պահանջելով, կրկնել հրաման, բացականչություն, հարցում արտահայտող նախադասությունները: Այնուհետև երեխաների ուշադրությունը հրավիրում է դրանցից յուրաքանչյուրի արտասանությանը.

-Լսե՛ք, թե ինչպես է Անին հարցնում, և դուք էլ կրկնե՛ք նրա հարցը, հետո պատասխանեք այդ հարցին: Սրան հաջորդում է ուսուցչի հաջորդ հրահանգը.

-Հարցրե՛ք Անիին, թե որն է նրա սիրելի խաղը կամ ինչ խաղ է սիրում խաղալ:

Այս կերպ գործնականորեն կարելի է յուրացնել տալ նաև բացականչության, հրաման, խնդրանք արտահայտող նախադասությունների հնչերանգը: Հետո նույն աշխատանքը կատարել նաև բնագրի վրա[10]: Մենք առաջարկում ենք կիրառել նաև ՏՀ տեխնոլոգիաներ. 5-7 րոպե ունկնդրել տալ գրական որևէ ստեղծագործություն՝ աշակերտների ուշադրությունը հրավիրելով հարցական, բացականչական, հրամայական, պատմողական նախադասությունների հնչերանգին ու արտասանությանը: Մեթոդիկայում մշակված են մի շարք հնարներ, որոնք նպաստում են ընթերցած ստեղծագործությունը խորությամբ ըմբռնելուն.

ա. դիտարկել և մեկնաբանել ստեղծագործության վերնագիրը,

բ. առանձնացնել հենակետային (բանալի) բառերն ու արտահայտությունները,

գ. վերլուծել բնագիրն ու պարզաբանել հիմնական գաղափարը, ենթատեքստը և այլն:

Աշակերտների արտահայտիչ ընթերցելու կարողության ձևավորմանը `

---

[9] Ջ.Գյուլամիրյան, Կարդալու կարողությունների և խոսքի զարգացումը տարրական դասարաններում, Երևան, 1998:

[10] ԹորոսյանԿ., Չիբուխչյան Կ., Ընթերցանության դասաժամերի դերը ինքնուրույն գործունեության կազմակերպման և մտածողության զարգացման գործում // «Նախաշավիղ», Երևան, 2010, N6

Թիթեռներ չեն էդ/, դանդաղ տեմպ
Թիթեռներն անցան հանգիստ
Ծաղիկների հետ//
Այդ ձյունն է գալի, արագ տեմպ
Փաթիլն է ձյունի ` տրամաբանական տեմպ
Որ կարծես սպիտակ Թիթեռնիկ լինի//:

Ընթերցանության ժամանակ ուսուցիչը պետք է համապատասխան հնչերանգով և զգացմունքայնությամբ ներկայացնի տղայի և մոր զրույցը, իսկ հետո հարցերի համակարգի միջոցով ստուգի, թե աշակերտները որքանով հասկացան բանաստեղծության իմաստը [11] : Դերերով և խմբովին կարդալը ևս մեծապես նպաստում է կրտսեր դպրոցականների արտահայտիչ կարդալու կարողության զարգամանը, քանի որ այդ դեպքում նրանք գիտակցում են հերոսների խոսքը, հնչերանգը, ձայնի փոփոխությունները և ըստ այդմ էլ՝ ընտրում են կարդալու ճիշտ ձևն ու եղանակը: Դիցուք՝ վերցնենք «Այբբենարանի» դասերից մեկը՝ «Ծունը և հավը»: Այս փոքրիկ կատակ բանաստեղծությունը դերերով ընթերցելիս երեխաներն առավել լավ կընկալեն իմաստային նրբերանգները և արդեն սովորած կետադրական նշանների օգնությամբ կփորձեն համապատասխան ձայնային ու հնչերանգային փոփոխություններով ներկայացնել այն[12]:

Ծունը հաչեց՝ հա՛ֆ, հա՛ֆ, հա՛ֆ…

Մոտիկ եկավ մի չալ հավ:

Ասաց.

-Ի՞նձ ես դու կանչում, Ինձանից ի՞նչ ես պահանջում:

Ծունը լռեց. Չկար ելք:

Ասաց.

–Ա՛յ քեզ հավի խելք: Կչկչալում մի հատ ես, Հնչյունները չգիտես:

---

[11] ԹորոսյանԿ., Չիբուխչյան Կ., Ընթերցանության դասաժամերի դերը ինքնուրույն գործունեության կազմակերպման և մտածողության զարգացման գործում // «Նախաշավիղ», Երևան, 2010, N6

[12] Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա,Եր., «Զանգակ»,2006



Ես ասում եմ ոչ թե հավ,
Այլ. Լա՛վ լսիր, հա՛ֆ, հա՛ֆ, հա՛ֆ…
Ես հաչում եմ ինձ համար,
Ոչ թե քեզ եմ կանչում, հա՛վ:

Գրական երկերի ընթերցման միջոցով կրտսեր դպրոցականը փորձում է երևակայությամբ ներթափանցել նկարագրված դեպքերի ու իրադարձությունների մեջ, ապրումակցել հերոսներին, և դրանց ազդեցությամբ աստիճանաբար սկսում է յուրացնել տարաբնույթ բարոյական հասկացություններ ու արժեքներ: Ըստ այդմ էլ՝ գրական երկերի գեղագիտական և բարոյական արժեքներն ընկալելու համար կարևորվում են հետևյալ դրույթները՝

ա. մտորել կարդացածի շուրջ,
բ.գնահատել նրանց արարքները,
գ.համեմատել իրենց կյանքը հերոսների կյանքի հետ,
դ.կատարել բարոյական չափանիշներին համապատասխան արարքներ:

Այս գործընթացում կարևոր է ուսուցչի աշխատանքը, մեթոդների ընտրությունը, որոնք դաստիարակչական և ուսուցողական մեծ արժեք ունեն[13]:

[13] Գալսյան Ա. և ուրիշներ, Գրական ունկնդրում և խոսք, 1-ին դասարան, Երևան, 2012:

Գրական ունկնդրման ժամերին պետք է ուշադրություն դարձնել նաև բառերի ուսուցմանը, քանի որ բառերի միջոցով են աշակերտները նկարագրում հերոսների արարքները, ստեղծագործության մեջ արծարծված գաղափարները[14]: Հաջորդ խնդիրը, որին պետք է անդրադառնալ գրական ունկնդրմաժամանակ, ստեղծագործության ժանրային կամ կառուցվածքային առանձնահատկությունների քննությունն է:

2.2 Արտահայտիչ կարդալու հմտությունների զարգացման ընթացք

Արտահայտիչ կարդալու հմտությունների զարգացման ընթացքում կարող է դիտարկվել հարցերի հետևյալ շրջանակը.

1) Ի՞նչ տեսար:
2) Ի՞նչ զգացիր:
3) Ինչպե՞ս է սկսվում ստեղծագործությունը:
4) Ինչպե՞ս է ավարտվում ստեղծագործությունը:

[14] Ջ.Գյուլամիրյան, Կարդալու կարողությունների և խոսքի զարգացումը տարրական դասարաններում, Երևան, 1998:

5) Ինչո՞ւ է ստեղծագործության հերոսն այդպես վարվում:

6) Ինչպե՞ս կվարվեիր դու այդ դեպքում:

7) Ինչպե՞ս կվերնագրեիր ստեղծագործությունն այլ ձևով:

8) Ինչո՞ւ է ստեղծագործությունը վերնագրված այդպես:

9) Նշի՛ր ստեղծագործության դրական հերոսներին:

10) Նշի՛ր ստեղծագործության բացասական հերոսներին:

11) Ստեղծագործության ո՞ր հերոսի արարքներն են արդարացված:

12) Ստեղծագործության ո՞ր հերոսն է սխալ գործում:

13) Ինչպե՞ս կգնահատես հերոսի արարքը:

14) Ո՞րն է ստեղծագործության այս հատվածի հիմնական գաղափարը:

15) Ո՞րն է ամբողջ ստեղծագործության գաղափարը:

16) Մարդկային ինչպիսի՞ հատկանիշներ կվերագրեք ստեղծա-գործության հերոսին:

17) Ի՞նչ բառերով կնկարագրեք հերոսին:

18) Ի՞նչ բառերով կնկարագրեք բացասական հերոսին:

19) Ինչո՞ւ նման ձևով վարվեց հերոսը:

20) Ի՞նչ կանեիր դու նման պարագայում:

21) Ստեղծագործության ո՞ր հերոսին կօգնեիր և ինչո՞ւ:

22) Ինչպե՞ս կշարունակեիր ստեղծագործությունը:

23) Ստեղծագործության ո՞ր հատվածը քեզ դուր եկավ:

24) Ստեղծագործության ո՞ր հատվածը քեզ դուր չեկավ:

25) Ի՞նչ հերոս կավելացնեիր ստեղծագործության մեջ:

26) Լսի՛ր և վերնագրի՛ր ստեղծագործության առաջին հատվածը:

27) Լսի՛ր և վերնագրի՛ր ստեղծագործության երկրորդ հատվածը:

28) Լսի՛ր և վերնագրի՛ր ստեղծագործության երրորդ հատվածը:

29) Խմբով նկարագրե՛ք ստեղծագործության հերոսներին:

30) Խմբով գնահատե՛ք հերոսների արարքները:

31) Առանձնացրե՛ք ստեղծագործության դրական ու բացասական հերոսներին:

32) Ստեղծագործության հիմնական գաղափարը ներկայացրե՛ք մեկ նախադասությամբ:

33) Ստեղծագործության ո՞ր հատվածում է հեղինակի հիմնական ասելիքը:

34) Մեկ բառով նկարագրի՛ր ստեղծագործության դրական հերոսին:

35) Մեկ բառով նկարագրի՛ր ստեղծագործության բացասական հերոսին:
36) Ի՞նչ կավելացնեիր կամ կփոխեիր նշված ստեղծագործության մեջ:
37) Ինչպե՞ս՝ կներկայացնես հեղինակի հիմնական ասելիքը:
38) Ի՞նչ կանեիր նշված հերոսին օգնելու համար:
39) Ո՞ր հերոսը սխալ արարք կատարեց:
40) Ո՞ր հերոսը ճիշտ վարվեց:
41) Ո՞ր հերոսի արարքը քեզ ամենաշատը դուր եկավ:
42) Ո՞ր հերոսին կդատապարտեիր կատարած արարքի համար:
43) Ո՞ր հերոսին կներեիր:
44) Ո՞ր հերոսի կփոխեիր:
45) Հերոսի ո՞ր հատկանիշն է ամենալավը:
46) Ինչո՞ւ է մարդը սխալ գործում:
47) Արդյո՞ք հնարավոր է մարդուն փոխվել:
48) Արդյո՞ք հնարավոր է սխալներից դաս քաղել:
49) Ի՞նչ կանեիր դու այդ վիճակում:
50) Ի՞նչ կզգայիր դու այդ հերոսի փոխարեն:

Հարցերի այսպիսի շրջանակը նպաստում է մտածողության զարգացմանը: Գրական ստեղծագործությունը պատմել սովորեցնելիս կարելի է օգտագործել նաև նկարներով պլան: Ստեղծագործության վերարտադրումը կարելի է իրականացնել ինչպես շարունակելով, այնպես էլ ընտրովի, շարքերով, խմբերով, դերերով և այլն: Գրական ունկնդրման ժամանակ կարելի է կիրառել տարբեր մեթոդներ: Այսպես՝ խմբային աշխատանքները հնարավոր է իրագործել համագործակցային մեթոդով, իսկ առանձին հարցերի անդրադառնալիս ցուցաբերել անհատական մոտեցում յուրքանչյուր աշակերտի: Մտագրոհ մեթոդը նպատակային կլինի կիրառել ստեղծագործության հիմնական գաղափարը ընկալելի դարձնելու համար:

Ունկնդրման դասի մեթոդական շղթան ընդգրկում է հետևյալ քայլերը.

- նախապատրաստական զրույց գրական ստեղծագործության թեմայի շուրջ,
- գրական ստեղծագործության ամբողջական ընթերցում,
- գրական ստեղծագործության ընթերցում,
- աշխատանք գրական ստեղծագործության հիմնական գաղափարի բացահայտման ուղղությամբ,
- գրական ստեղծագործության պատմում,

- ամփոփում:

Մինչ ստեղծագործությանը նադրադառնալը ուսուցիչը պետք է նախապատրաստական աշխատանք տանի ուսուցանվող թեմայի վերաբերյալ: Ընթերցանությունը պետք է կատարվի բացատրական մեթոդով: Ամեն հատված ընթերցելիս ուսուցիչը անդարդառնա այդ հատվածի հիմնական գաղափարին: Այնուհետև կիրականացվի ստեղծագործության ամբողջական ընթերցում: Այսինքն՝ գրական ունկնդրումը պետք է իրականացվի փուլ առ փուլ: Յուրաքանչյուր փուլի ընթացքում պետք է առանձնացվեն ստեղծագործության մեջ արծարծված հիմնական գաղափարները: Ուսուցչի մեկնաբանությունները կարող են առանցքային դերակատարում ունենալ ստեղծագործության մեջ արծարծված գաղափարների ընկալման հարցում: Այս առումով ուսուցիչը պետք է ուշադիր լինի և ճիշտ մոտեցում դրսևորի հատկապես կերպարների բնորոշման հարցում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գեղարվեստական գործերը միայն օգնում ու կողմնորոշում են ուսուցչին, թե ինչպես նպատակաուղղել աշխատանքը, որպեսզի երեխաների մեջ զգացմունքներ առաջանան, և ինչպես հղկեն դրանք: Իսկ, թե ինչպես հուզել աշակերտներին ստեղծագործությունների ընթերցման ժամանակ, պայմանավորված է ոչ միայն ուսուցչի հմտությամբ և գեղարվեստական ընթերցանությանը տիրապետելու կարողությամբ, այլև այն մեթոդներով ու սկզբունքներով, որոնցով առաջնորդվում է նա: Ուսուցիչը պետք է այնպես կարդա, որ երեխայի աչքերը փայլեն, հուզմունքից շունչը պահի…

Միայն այս ճանապարհով երեխան կկարողանա գնահատել ու վերլուծել բարոյական արժեքները՝ բարությունը, ազնվությունը, մեծահոգությունը, արժանապատվությունը, հայրենասիրությունը, ընկերասիրությունը, հանդուրժողականությունը և այլն: Շահեկան է, որ աշակերտն ինքը կարողանա վերլուծել ընթերցած ստեղծագործությունը և սեփական եզրահանգումներ անել բարու և չարի, լավի ու վատի, ճշմարիտի ու սխալի մասին: Կրտսեր դպրոցականների համար գեղարվեստական ստեղծագործություններն, Ուշինսկու բնութագրմամբ՝ այն պատուհանն է, որտեղից նրանք տեսնում են աշխարհը, ճանաչում ու սիրում են իրենց շրջապատող բնությունը, մարդկանց, ձևավորվում է ու զարգանում նրանց գեղարվեստական ճաշակը:

Այսպիսով՝ գրականությունն ու գրական ընթերցանությունը այն ակունքն են, որոնց միջոցով ձևավորվում են կրտսեր դպրոցականների հետաքրքրությունն ու սերը ընթերցանության նկատմամբ, հզորանում է բարոյական արժեքների ներգործության ուժը, ինչպես նաև՝ գրական խոսքը խորությամբ հասկանալու կարողությունը: Արտահայտիչ ընթերցանությունը սովորեցնում է տեսնել ու զգալ գեղեցիկը, բարին, վեհը, վսեմն ու ազնիվը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ա.Տեր-Գրիգորյան, Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան 1980:
2. Ա.Տեր Գրիգորյան, Գրաճանաչության մեթոդիկան, Երևան 1968:
3. Ա.Տեր Գրիգորյան, Քերականության մեթոդիկա, Երևան 1974:
4. Ա. Տեր Գրիգորյան, Խոսքի զարգացման մեթոդիկա, Երևան, 1976:
5. Գ.Էդիլյան, Հայոց լեզվի մեթոդիկա, Թիֆլիս, 1923:
6. Ա.Ղարիբյան և ուրիշներ, Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1955:
7. Ջ.Գյուլամիրյան, Կարդալու կարողությունների և խոսքի զարգացումը տարրական դասարաններում, Երևան, 1998:
8. Գալսյան Ա. և ուրիշներ, Գրական ունկնդրում և խոսք, 1-ին դասարան, Երևան, 2012:
9. Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2006:
10. ԹորոսյանԿ., Չիբուխչյան Կ., Ընթերցանության դասաժամերի դերը ինքնուրույն գործունեության կազմակերպման և մտածողության զարգացման գործում // «Նախաշավիղ», Երևան, 2010, N6